Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 07th February 2021 Bulletin 06/2021

Fourth Sunday after Nativity

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՏՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-11;

Պօղոս, Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ համաձայն Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու բարեպաշտութեամբ եղած ճշմարտութեան գիտակցութեան, յաւիտենական կեանքի յոյսով՝ որ անսուտն Աստուած խոստացաւ դարերու ժամանակներէն առաջ - բայց յատուկ ատենին իր խօսքը բացայայտեց քարոզութեամբ՝ որ վստահուեցաւ ինծի մեր Փրկիչ Աստուծոյ հրամանով - ,

Տիտոսի՝ հարազատ զաւակիս հասարակաց հաւատքին համեմատ. շնորհք եւ խաղաղութիւն Հայր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝ մեր Փրկիչէն:

Ես ձգեցի քեզ Կրետէ, որպէսզի ուղղես բոլոր պակաս մնացած բաները ու երէցներ նշանակես ամէն քաղաքի մէջ՝ ինչպէս պատուիրեցի քեզի. եթէ մէկը ըլլայ անմեղադրելի, մէկ կնոջ ամուսին, եւ ունենայ հաւատարիմ զաւակներ, որոնք անառակութեան համար ամբաստանուած կամ ըմբոստ չըլլան: Որովհետեւ եպիսկոպոսը՝ իբր Աստուծոյ տնտես՝ պէտք է ըլլայ անմեղադրելի. ոչ ինքնահաւան, ոչ բարկացող, ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ ամօթալի շահախնդրութեան հետամուտ եղող, հապա՝ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէսզի կարենայ թէ՛ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ, թէ՛ կշտամբել հակաճառողները:

Քանի որ շատ են ըմբոստները, դատարկախօսներն ու հրապուրողները, մա՛նաւանդ անոնք՝ որ թլփատութենէն են: Պէտք է պապանձեցնել զանոնք. անոնք կը կործանեն ամբողջ տուներ, եւ կը սորվեցնեն անպատեհ բաներ՝ ամօթալի շահախնդրութեան համար:

The Epistle of St Paul to the Titus 1:1-11;

Paul, a servant of God and an apostle of Jesus Christ to further the faith of God's elect and their knowledge of the truth that leads to godliness— in the hope of eternal life, which God, who does not lie, promised before the beginning of time, and which now at his appointed season he has brought to light through the preaching entrusted to me by the command of God our Saviour,

To Titus, my true son in our common faith:

Grace and peace from God the Father and Christ Jesus our Saviour.

Appointing Elders Who Love What Is Good

The reason I left you in Crete was that you might put in order what was left unfinished and appoint [a] elders in every town, as I directed you. An elder must be blameless, faithful to his wife, a man whose children believe [b] and are not open to the charge of being wild and disobedient. Since an overseer manages God's household, he must be blameless—not overbearing, not quick-tempered, not given to drunkenness, not violent, not pursuing dishonest gain. Rather, he must be hospitable, one who loves what is good, who is self-controlled, upright, holy and disciplined. He must hold firmly to the trustworthy message as it has been taught, so that he can encourage others by sound doctrine and refute those who oppose it.

Rebuking Those Who Fail to Do Good

For there are many rebellious people, full of meaningless talk and deception, especially those of the circumcision group. They must be silenced, because they are disrupting whole households by teaching things they ought not to teach—and that for the sake of dishonest gain

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 7:37-52

Տօնին վերջին մեծ օրը՝ Յիսուս կայնած էր ու կ'աղաղակէր. «Եթէ մէկը ծարաւ է, թող գայ ինծի եւ խմէ: Ա՛ն որ հաւատայ ինծի, կենարար ջուրի գետեր պիտի բխին անոր փորէն, ինչպէս Գիրքը կ'ըսէ»: Ասիկա ըսաւ Հոգիին մասին՝ որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. որովհետեւ Սուրբ Հոգին տրուած չէր տակաւին, քանի որ Յիսուս փառաւորուած չէր տակաւին:

Բազմութենէն շատեր՝ երբ լսեցին այս խօսքը՝ կ'ըսէին. «Ճշմա՛րտապէս ա՛յս է մարգարէն»: Ուրիշներ կ'ըսէին. «Ա՛յս է Քրիստոսը»: Ուրիշներ ալ կ'ըսէին. «Միթէ Քրիստոս Գալիլեայէ՞ն պիտի գայ: Միթէ Գիրքը չ'ը՞սեր թէ Քրիստոս պիտի գայ Դաւիթի զարմէն ու Դաւիթի եղած գիւղէն՝ Բեթլեհէմէն»: Ուստի պառակտում եղաւ բազմութեան մէջ՝ անոր պատճառով: Անոնցմէ ոմանք ուզեցին ձերբակալել զայն, բայց ո՛չ մէկը ձեռք բարձրացուց անոր վրայ:

Ուստի սպասաւորները եկան քահանայապետներուն եւ Փարիսեցիներուն քով, որոնք ըսին անոնց. «Ինչո՞ւ հոս չբերիք զայն»: Սպասաւորները պատասխանեցին. «Ո՛չ մէկը երբե՛ք խօսած է այս մարդուն պէս»: Ուստի Փարիսեցիները պատասխանեցին անոնց. «Միթէ դո՞ւք ալ մոլորեցաք: Պետերէն կամ Փարիսեցիներէն մէ՞կը հաւատա՞ց անոր. բայց այս բազմութիւնը՝ որ չի գիտեր Օրէնքը՝ անիծեալ է»: Նիկոդեմոս ըսաւ անոնց, (որ նախապէս՝ գիշերուան մէջ գացեր էր իրեն, եւ անոնցմէ մէկն էր.) «Միթէ մեր Օրէնքը կը դատէ՞ մարդ մը, եթէ նախապէս չլսէ զայն, եւ չգիտնայ թէ ի՛նչ կ'ընէ»: Պատասխանեցին անոր. «Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես. զննէ՛ ու նայէ՛, որ Գալիլեայէն մարգարէ չ'ելլեր»:

The Holy Gospel of Jesus Christ according to John 7:37-52

On the last and greatest day of the festival, Jesus stood and said in a loud voice, "Let anyone who is thirsty come to me and drink. Whoever believes in me, as Scripture has said, rivers of living water will flow from within them." [c] By this he meant the Spirit, whom those who believed in him were later to receive. Up to that time the Spirit had not been given, since Jesus had not yet been glorified.

On hearing his words, some of the people said, "Surely this man is the Prophet."

Others said, "He is the Messiah."

Still others asked, "How can the Messiah come from Galilee? Does not Scripture say that the Messiah will come from David's descendants and from Bethlehem, the town where David lived?" Thus the people were divided because of Jesus. Some wanted to seize him, but no one laid a hand on him.

Unbelief of the Jewish Leaders

Finally the temple guards went back to the chief priests and the Pharisees, who asked them, "Why didn't you bring him in?"

"No one ever spoke the way this man does," the guards replied.

"You mean he has deceived you also?" the Pharisees retorted. "Have any of the rulers or of the Pharisees believed in him? No! But this mob that knows nothing of the law—there is a curse on them."

Nicodemus, who had gone to Jesus earlier and who was one of their own number, asked, "Does our law condemn a man without first hearing him to find out what he has been doing?"

They replied, "Are you from Galilee, too? Look into it, and you will find that a prophet does not come out of Galilee."

Տոն Ս. Իսահակ Պարթև Հայրապետի

Ս. Իսահակ հայրապետը Ս. Ներսես Մեծ կաթողիկոսի որդին էր, Ս. Գրիգոր Լուսաւորչի տոհմի վերջին ներկայացուցիչը, ով 387 թվականից ի վեր 52 տարի եղել է հայոց հայրապետական աթոռի գահակալը: Լինելով կրթված և հմուտ երաժշտական, հռետորական արվեստների, իմաստասիրության և լեզվագիտության մեջ՝ Ս. Սահակ Պարթևը մեծ նպաստ է բերել հայ ազգային մշակույթի զարգացմանը, եղել հայոց գրերի ստեղծման ջատագովը, Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի հետ դարձել հայ դպրության ու եկեղեցական մատենագրության հիմնադիր: Տառերի գյուտից հետո Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը սկսում են Աստվածաշնչի թարգմանությունը և այնպես կատարյալ են դա անում, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը դարեր հետո կոչվում է Աստվածաշնչի թարգմանությունների թագուհի:

Commemoration of the Pontiff St. Sahak Partev

Pontiff St. Sahak Partev was the elder son of Catholicos St. Nersess the Great, and the last Catholicos of the Armenian Church who descended from the lineage of St. Gregory the Illuminator. He became Catholicos of All Armenians in 387 A.D., and reigned for an astounding 52 years. Being talented in music and educated in the rhetorical arts, philosophy and linguistics, St. Sahak greatly contributed to the development of Armenian national culture. He was the strongest advocate for the creation of an Armenian Alphabet, and became its chief patron.

Following the creation of the Armenian Alphabet, St. Sahak and St. Mesrop opened a school for translators in the city of Vagharshapat (Etchmiadzin). There they begin the translation of the Holy Bible into Armenian and did it so perfectly, that centuries hence the Armenian Translation is called the "Queen Translation of the Breath of God". The first sentence translated from the Holy Bible is the opening verse of the Book of Proverbs: "To know wisdom and instruction, to perceive the words of understanding".

Սուրբ Վարդանանց տօնի քարոզը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

“Նայենք Յիսուսին՝ հաւատի զօրագլխին..” (Եբր. 12.2):

Յիսուսի եւ միմեանց սիրով կապուած սիրելիներ,

Նուիրական տօնի՝ Աւարայրի սուրբ նահատակների յիշատակման եւ ոգեկոչումի օրերի մէջ անցեալից եկող կանչ ու հրահանգ կա: Այն այսօր ծարաւ հոգիները հոգու ջրով թարմացնելու, կթոտած ոտքերը ամրացնելու, ապագային հայող մշուշուած հայեացքները մաքրելու գաղտնիքն է փոխանցում: Քաղաքական միտքը, ռազմական զօրութիւնը, դրամական միջոցները, մարդկային եռանդն ու ջանքը ուղղութիւն են ստանում, երբ ԳԱՂԱՓԱՐ կայ, որ բոլոր ջանքերին ու զոհողութիւններին իմաստ եւ արժէք տուող զօրութիւնն է: Նիւթական եւ մարդկային բոլոր միջոցներն ունեցողը կարող է չգնահատել, վատնել ու փչացնել, եթէ գաղափարական սլացք ու նպատակ չունի: ԳԱՂԱՓԱՐԻ, ՏԵՍԼԱԿԱՆԻ շուրջ է, որ մարդիկ հաւաքւում են՝ զոհելով իրենց նուիրականը՝ժամանակը, ապրումները, միջոցները, նոյնիսկ կեանքը:

Պատերազամներ միշտ եղել են եւ կը լինեն՝ տարբեր կագախսներով ու նպատակով: Սուրբ Ղեւոնդեանց եւ Վարդանանց համախմբողը, պայքարի հանողը միասիրտ դարձնողը հաւատքի եւ հայրենիի փրկութեան նոյն տեսլականն է: Եթէ լսենք Ի. դարասկզբին Սիւնիքը փրկող Գարեգին Տէր-Սողոմոնեան զօրավարին, կրկին գաղափարական նոյն հղացքն է, երբ ասում է. “Իմ հոգին երկու հենարան ունի՝ Աստուած եւ Հայրենիք”: Գաղափարներ կան, որ յաւիտենապէս նոյնն են՝ ծնողի պէս նուիրական եւ սիրելի: Հոգեւոր ծնողը “Հայր մեր, որ յերկինս ես” եղող Աստուած է, իսկ մարմնապէս ծնող մարդիկ եւ երկիրը՝ Հայրենիքը: Աստուածասէր մարդը ծնողասէր, եղբայրասէր եւ հայրենասէր չի կարող չը լինել:

Պատերազմական շատ զէնքեր փոխուել են զարգացումի այս դարում, բայց հոգու դէմ միշտ նոյն զէնքն է, որ գործածւում է՝ վախը: Հնում վախեցող զինուորին ետ էին ուղարկում, որ միւսներին վախով չը վարակի: Վախը նաեւ ցուցիչ է հաւատքի տկարութեան, ինչպէս իր կոչում սահմանում է Մեծն Վարդան. **“Վախը թերահաւատութեան նշան է, իսկ մենք վաղուց են մեզանից վանել թերահաւատութիւնը”**: Պատասխանատու պահին կիսատ հաւատացողն աւելի մեծ աւեր կարող է անել, քան դեռ չհաւատացած հոգին: Քաջութեան եւ արիութեան բազում ներբողներ կան, որոնց նպատակը սերունդին կրթելն է եւ բարոյական զէնք տալով՝ սովորեցնելը, թէ ինչպէս մարդ անարի, վատ ու վախկոտ չը լինի, յաղթի նախ իր ներսի պատերազմում: Գաղափար, հաւատք, տեսլական ունենալու դէպքում փոխւում է մարդու հայեացքը կեանքի եւ անգամ մահուան նկատմամբ, երբ ուրախութեամբ եւ ոչ վախով մարդ կարող է դիմաւորել մահի, երբ նպատակ կա՝ գիտակցուած է այդ զոհողութիւնը. “**Եթէ եկել է մեր կեանքը մահով աւարտելու պահը, ուրախ սրտով մահ ընդունենք եւ արիութեանն ու քաջութեանը վատութիւն** (իմա՛ վախկոտութիւն) **չը խառնենք”**,-ասում է սբ. Վարդանը:

Յանուն ինչի՞ պիտի պայքարի անհատը, ազգը, համայնքը. այն, ինչ բացարձակ եւ ճշմարիտ է, որ իր համար աւելին արժէ, քան իր ժամանակը, միջոցները, առողջութիւնը, անգամ կեանքը: Այսօրուայ կենցաղի մէջ շատ արժէքներ այլեւս նոյն կերպ չեն պաշտպանւում, յաճախ վախկոտութիւնը կարող է անգամ ճկուն դիւանագիտութիւն կոչուել, անգաղափար եւ անսկզբունք մարդու անուանուել ճարպկութիւն: Այնինչ դա պարտութեան այլ երեսն է, յանձնուելու, չը կռուելու, չը բարձրանալու, ձուլուելու, դանդաղ մեռնելու այլ տեսակը: Թէկուզ ողջ աշխարհը կաշառուի, հնարաւոր չէ փոխել այն բացարձակ ճշմարիտը, որ Աստծուց է եւ ոչ մարդկանցից: “**Չ’երկնչե՛նք եւ չ’ընկրկենք հեթանոսների բազմութիւնից եւ թիկունք չը դարձնենք մահկանացուի ահեղ սրի դէմ, որ եթէ Տէրը մեզ յաղթութիւն պարգեւէ, ոչնչացնենք նրանց զօրութիւնը եւ պայծառացնենք ճշմարտութիւնը**”:

Սբ. Վարդանանց պայքարի հիմքում ՃՇՄԱՐՏՈՒԹԻՆը պայծառացնելն է: Բոլոր դարերի բոլոր քրիստոնեաների համար նոյնն է այդ Ճշմարտութիւնը: Պիղատոսի “ի՞նչ է ճշմարտութիւնը” հարցը բոլոր սերունդների հարցն է, իսկ պատասխանը նոյնն է՝ “Ես եմ Ճշմարտութիւնը” ասող Քրիստոս: Անտեսանելի պատերազմը շարունակւում է՝ ամէն սերունդի նոր դէմքով ներկայանալով, իսկ յաղթութեան լուսէ պսակը հաւատարիմ վկաներինն է: Եկեղեցու բոլոր սրբերը Քրիստոսի՝ Ճշմարտութեան վկաներն են, հաւատարիմներն ու պաշտպանները, իրենց կեանքով դասը սերունդներին թողնողները: Այսօր եւս հաւատքի բանակի զօրագլուխը Նոյնն է, Որին նայելով ու հետեւելով կարող ենք յաղթել մե՛ր պատերազմը վասն Յիսուսի, վասն հայրենեաց.

“**Մենք էլ, որ մեր շուրջը վկաների այսչափ բազմութիւն ունենք, դէ՛ն զցենք ամէն հպարտութիւն եւ ծանր մեղք, համբերատարութեամբ ընթանանք դէպի մրցասպարէզ, որ բացուած է մեր առաջ. Նայենք Յիսուսին՝ հաւատի զօրագլխին...”** (Եբր. 12.1-2):

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

St Vartanantz

St Yeghiche Parish Council is proud to invite our faithful on the occasion of St Vartanantz, to celebrate Divine Liturgy on Thursday 11th February 2021 at 11:00 am at St Yeghiche Armenian Church, Cranley Gardens, Kensington London SW7 3BB, UK. His Grace Bishop Hovakim will preside and give the sermon of the day. Let us celebrate the feast of St Vartan who fell for the right to worship our Christian faith and Homeland.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Եթէ մէկը ծարաւ է, թող Ինձ մօտ գայ եւ խմի: Ով ինձ հաւատում է, ինչպէս Գիրքն է ասում, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն» (Յովհ. 7: 37--38):

Սիրելինե՛ր,

Ծարաւել եւ ջուր խմել բոլորիս է հատուկ, ինչը կրկնուող պահանջ է ամէն օրուայ համար: Մենք չենք կարող ապրել առանց ջրի, սա հասկանալի է: Բայց մէջբերուած մտքում խօսքը մարմնի ծարաւի մասին չէ: Նման մտքի հանդիպում ենք նաեւ սամարացի կնոջ հետ Քրիստոսի զրոյցում, որ եղաւ ջրհորի մօտ. **«Ով որ այս ջրից խմի, նորից կը ծարաւի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, յաւիտեան չպիտի ծարաւի: Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մէջ կը լինի բխող ջրի աղբիւր յաւիտենական կեանքի համար»** (Յովհ. 4:13-14):

Քրիստոս այստեղ այլ՝ ոչ մարմնական ծարաւի մասին է խօսում: Ծարաւ է մարդու միտքը, սիրտը, հոգին: Ո՞վ է այն մարդը, որ զգում է այս ծարաւը, եւ արդեօ՞ք բոլորն ունեն այս ծարաւը: Քրիստոսի խօսքը կարծես կանչ է նաեւ, որ մեր ներսում այդ ծարաւն ունենանք, քանի որ կեանքի մասին է, յաւիտեանական կեանքի: «Ով որ ծարաւ է, թող գայ եւ խմի» - ասում է Քրիստոս, ինչը նշանակում է, որ Նա ոչ ոքի վրայ չի բռնանում կամ ստիպում: Ով զգում է, ով սրտում փափագն ունի, այդպիսինին է կանչում:

«Ով ինձ հաւատում է, ինչպէս Գիրքն է ասում, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»,- այսպէս խօսել կարող է ոչ այլ ոք, եթէ ոչ միայն Կենդանի Աստուած, որ ճշմարտապէս տալիս է կեանքը եւ Սուրբ Հոգին: Սա լսողներն իմացան, որ Խօսողը սովորական մարդ չէ, այլ Մէկը, որ անգամ սուրբերին կարող է այդ ջուրը խմեցնել (Սբ. Աթանաս): Սա մարգարէութեան կատարում է. **«Քո Աստուածը ամէն ժամ քեզ հետ կը լինի, քո անձն ըստ ցանկութեան յագեցում կը ստանայ, եւ քո ոսկորները կը լիանան ու կը լինեն ինչպէս ջրարբի պարտէզ, ինչպէս աղբիւր, որից ջուրը չի պակասի»** (Ես. 58:11):

Քրիստոս, **«Ով ինձ հաւատում է, ինչպէս Գիրքն է ասում, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»** ասելով, ուզում է, որ ջրի մասին ասուածը ընկալուի ոչ թէ մարմնի, այլ հոգու համար: Իսկ «ներսից» ասելով՝ ի նկատի ունի մարդու սիրտը, ինչպէս կարծում է Սբ. Յովհան Ոսկեբերանը՝ մէջբերելով սաղմոսը. **«Ուզեցի կամքդ կատարել, Աստուա՛ծ իմ, եւ օրէնքդ, որ իմ ներսում է»** (Սաղմ. 39:9):

Սիրտը հոգեւոր գիտակցութեան մէջ կենտրոնական ու որոշիչ է: Անգամ մարդու խօսքը ոչ թէ ուղեղից բխող, այլ սրտից ելնող է որակում Քրիստոս. **«Իսկ ինչ ելնում է բերանից, սրտից է գալիս, եւ ա՛յն է մարդուն պղծում, քանի որ սրտից է, որ ելնում են չար խորհուրդներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյանքներ»: (Մատթ. 15:18-19):** Քրիստոս մարդու սիրտն է սրբում, նորոգում Իր խօսքով եւ Սուրբ Հոգով:

Աստծոյ խօսքը Սուրբ Հոգով տրուեց մարգարէներին: Հոգին գիրքն է այն սրտի, ուր բնակւում է Ինքը՝ Խօսք Աստուած: Դրա համար է շեշտում, որ Իրեն հաւատացողինն է փրկութեան խօսքը, որ գալիս է Սուրբ Հոգուց եւ լցնում է սիրտը, կենաց ջուր է, կենդանութիւն տուող ջուր է. **«Սրտիցս քո բարի պատգամներն են բխում, եւ իմ գործերը պատմում եմ թագաւորին»** (Սաղմ. 44:2): Սուրբ Հոգին հաղորդակից է մեզ նաեւ Աստծոյ խօսքով, որ ճանաչենք Փրկչին, որ յիշեցնում է. **«Քննեցէք Գրքերը»** (Յովհ. 5:39), **«Եւ ամէնքը Աստծուց ուսած կը լինեն»** (Յովհ 6:45): Փրկիչը որպէսզի ցոյց տա, որ շնորհների անսպառ բխման մասին է խօսում, աղբիւր եւ ջրերի գետեր է կոչում: Այն մեկանգամեայ չէ, շարունակական է, քանի որ Կեանքի Աղբիւրից է գալիս. **«Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մէջ կը լինի բխող ջրի աղբիւր յաւիտենական կեանքի համար»:** (Յովհ. 4:14): Դա միայն Իսրայէլի տարածքի եւ սահմանափակ թուով ժողովրդի համար չէ. **«Ողջ երկիրն է բռնել ձայնը նրանց, եւ մինչեւ աշխարհի ծայրն են հասել խօսքերը նրանց»** (Սաղմ. 18:5):**«Քանզի ես նորն եմ անելու, որ հիմա յայտնուելու է, եւ դուք պիտի ճանաչէք. ճամփայ պիտի բացեմ անապատով եւ անջրդի հողում գետեր պիտի բխեցնեմ»** (Ես. 43.19):

Ի՞նչ ուղերձ է փոխանցւում մեզ՝ այօրուայ հաւատացեալներիս.

Քրիստոս մեծ տօնի վերջին օրը ելաւ խօսքն ասելու, քանի որ առաջին եւ վերջին օրերն էին մեծ ու սուրբ դիտւում (տե՛ս Ղեւտ. 25:35-37): Միջանկեալ օրերին ժողովուրդն ուրախութեան հանդէսների մէջ էր եւ ցրուած: Իսկ գնալուց առաջ վերջին օրը բոլորը հաւաքուած էին: Առաջին սրբութեան օրը Յիսուս դեռ չէր հասել այնտեղ, իսկ յաջորդող տօնախմբուող ուրախ օրերին ոչինչ չասաց, այլ խօսեց վերջին օրը՝ ցոյց տալով իրենց դեպի փրկութիւն ճամփան:

- Ուրախութեան տօնական աղմուկի ժամանակ սրտի ականջը բաց չէ: Այսպիսի պահեր շատերս ենք ունեցել, երբ յետոյ ափսոսանքով յիշել ենք, որ կարեւոր բան էր ասւում, բայց մեր ուշադրութիւնն այլ տեղ էր, միտքը չորսաց, խօսքի սերմը սիրտ չը հասաւ: Քրիստոս վերջին օրը՝ ժողովրդի գնալուց առաջ ասաց այս խօսքը, որ մնայ իրենց սրտում եւ խոկան սրա շուրջ:

- «Ով ծարաւ է»… իսկ ո՞վ ծարաւ չէ: Քրիստոս «երանի» է ասում հոգեւոր քաղցն ու ծարաւն զգացողին: **«Եթէ մէկը ծարաւ է, թող Ինձ մօտ գայ եւ խմի»** - Սբ. Եփրեմ Ասորին, այս դրուագի մասին խօսելով, ասում է, որ Շնորհը չի մերժում ոչ մի հոգու, որ ձգտում է փրկութեան: Բայց, փաստորեն, ոչ բոլոր մարդիկ են ծարաւն զգում: Գուցէ շատերս կարճաժամկետ յագեցում տուող ջրեր ունենք, որոնք չեն թողնում Կեանքի Ջրի ծարաւն զգալ:

-Ամէն ծարաւած չէ, որ ջուրը գտել է: Զգում է իր ծարաւը, բայց ոչ մի ջուր չի յագեցնում, մինչեւ գտնի այս ջուրը: Սրա համար հաւատալ եւ սրտով ընդունելն է արդիւնք ունենում: Քրիստոս կանչում է նրանց, որոնք արդեն գիտակցում են իրենց ծարաւ լինելը, կանչում է նաեւ նրանց, որոնք դեռ նոր պիտի գիտակցեն, որ իրենց փնտրածը հէնց այդ Ջուրն է:

-Ի՞նչ է այդ ջուրը, որ խմելուց մարդ այլեւս չի ծարաւում: Քրիստոս է ոչ միայն Տուողն այդ ջրի, այլեւ հէնց Ինքն է այդ կեանքի Ջուրը: Քրիստոսով են յագենում բոլոր հոգով ծարաւները:

Մեզ մնում է նայել Քրիստոսին հոգու հայեացքով ու սամարացի կնոջ պէս ասել. **«Տէ՛ր, տո՛ւր ինձ այդ ջուրը, որպէսզի չծարաւեմ...»** (Յովհ. 4:15): Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեզ բոլորիդ հետ լինի:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

"Diarn'ntarach Տեառնընդառաջ"

Faith, Hope and Love are principle graces and values in Christianity. During a person's baptism, the priest asks the godfather what does the child or the person (the catechumen) being baptised requests. "Faith, hope, love and baptism," responds the godfather. St. Paul underlines that "the greatest of these is love" (1 Corth. 13.13). His Holiness Karekin II instituted a new tradition of blessing newlywed couples in the Armenian Church on the occasion of the Feast of the Presentation of Our Lord and Savour Jesus Christ. This is the feast celebrating the event of Jesus' presentation to the temple as a child by his parents. On Saturday **13th February 2021 at 19:00**. we will be celebrating Տեառնընդառաջ Presentation of Jesus Christ to the Temple. A special Blessing of Young Families will follow the special prayers. Bishop Hovakim will preside over the proceedings. Please join and let us celebrate the service of light which is unique Armenian Tradition.

INVITATION

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to support our church by becoming a registered member.

Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices.

Please request your Registration Form from Council members at the Church Entrance or contact us by email to: info@styeghiche.org.uk

Support your church by setting up a Direct Debit for your weekly church contribution to our below bank account: St Yeghiche Armenian Church Parish Ltd
Account at: HSBC,
Acc.no: 42674432,
Sort code: 40-02-26,
IBAN: GB13HBUK40022642674432,
BIC: HBUKGB4106F

Thanks in advance

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Sonig Jojaghaian, Mr Carlos & Mrs Aliag Jojaghaian-Barnet and Family, Mr Heros & Mrs Leanne Jojaghaian for the soul of their Husband, Father and Grandfather the late **ANTRANIG JOJAGAIAN** on the 40th day memorial of his passing, also for all the old and new deceased members of the **JOJAGHAIAN** Family.

By Mrs Janet Khachatourian Martirosian, Mr and Mrs Tony Martirosian and Family, Mr and Mrs Peter Martirosian and Family , for the soul of their husband, father and Grandfather the late **SAKO MARTIROSIAN (Սաքо Մարտիրոսեան),** on the 12th anniversary of his passing, and also for all the old and new deceased members of the **KHACHATOURIAN** and **MARTIROSIAN** families.

By **The Armenian Relief Society of GB (Հայ Օգնութեան Միութիւն)**, in memory of their late Ungerouhiner: **SUSIE SHEKERDEMIAN** (Սիւզի Շիրտոմեան), **LIZA ARMAGHANIAN** (Լիզա Արմաղանեան), **MARIE KHALOIAN** (Մարի Խալոյեան), **SEDA TARLANIAN** (Սեդա Թառլանեան), **ANJEL RAHANIAN** (Անժէլ Ռահանեան), **YVETTE MANKASSARIAN** (Իվէթ Մանգասարեան), **ACHIK HOVHANESSIAN** (Աչիկ Յովհաննէսեան), **AREG DER BARSEGHIAN** (Արեգ Տէր Բարսեղեան), **ARPINEH LEVONIAN** (Արփինէ Լևոնեան), **NELLY HOVSEPIAN** (Նելլի Յովսէփեան), **HRIPSIK MARTINIAN** (Հռիփսիկ Մարթինեան), **HASMIK GASPARIAN** (Յասմիկ Գասպարեան), **SIROUN CROFT** (Սիրուն Քրոֆթ), **ALICE KARAPETIAN** (Ալիս Կարապետեան), **OVSANNA KHULIAN** (Ովսաննա Խուլեան), **RUBINA BOGHOSIAN** (Ռուպինա Պօղոսեան), **FLOR AZOIAN** (Ֆլոր Ազոյեան), **MARIE CHOLAKIAN** (Մարի Չոլաքեան), **MAGGIE ASLANIAN** (Մագի Ասլանեան), **ANGEL DADOURIAN** (Անժել Տատուրեան), **ARSHAKOUHI NANAJANIAN** (Արշակուհի Նանաջանեան), **KNARIK HOVHANNESIAN** (Քնարիկ Յովհաննէսեան), **SIRAN HAGOPIAN** (Սիրան Յակոբեան), **NAZIK GRIGORIAN** (Նազիկ Գրիգորեան), **KATHY GHOURJIAN** (Քաթի Ղուրջեան), **NVART KHLOIAN** (Նուարթ Խլոյեան), **KNARIG YOUNG-VARTANIAN** (Քնարիկ Եանգ-Վարդանեան), **ANGEL BESHIRIAN** (Անժել Բէշիրեան), **ROZIK BANIAN** (Ռոզիկ Բանեան), **SEDA ARZOOMANIAN** (Սեդա Արզումանեան), **LOUSIK ARZOOMANIAN** (Լուսիկ Արզումանեան).

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for ***prompt*** payment of their **annual membership dues and generous donations,** thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: ***"St Yeghiche Armenian Church"***. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.